ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԿՈՒՐՈՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը կինեզիոլոգիայի և կինեզոթերապիայի ոլորտում.

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով կինեզիոլոգիայի և կինեզոթերապիայի պրակտիկությունը կրթության կազմակերպման գործում.

Ընդունելով կինեզիոլոգիայի և կինեզոթերապիայի ոլորտի տեսության և պրակտիկայի զուտագեռ զարգացմանն ուղղված Կողմերի ջանքերը և պատրաստակամությունը,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են.

2.1.1 Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտում (այսուհետ՝ ԳՀԻ) ուսանողների պրակտիկաների կազմակերպման միջոցով,

2.1.2 ՀՖԿՍՊԻ–ի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.1.3 նորարարական, ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.1.4 սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.1.5 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման ոլորտում,

2.1.6 սույն Հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, ԳՀԻ-ի տարածքների, գույքի օգտագործման շուրջ,

2.1.7 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման գործում

2.1.8 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու շուրջ:

2.2 Կողմերն իրականացնում են նաև մասնագիտական և ասպիրանտական հետազոտական համատեղ ծրագրեր:

2.3 Իրականացնում են երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական (վերականգնողական, առողջարարական և այլն) բնույթի ծրագրեր, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում համատեղ հետազոտություններ:

2.4 Կազմակերպում են միջազգային գիտական կոնֆերանսների, սեմինարների, ստեղծագործական բանավեճերի, խորհրդակցությունների համագործակցության շրջանակներում:

2.5 Իրականացնում են գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում:

2.6 Կարող են հայցել և ստանալ համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն:

2.7 Կարող են համատեղ օգտագործել Կողմերի գրադարանային ֆոնդերը:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2021թ. փետրվարի 10-ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ 1	**Կողմ 2**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Օրբելի եղբ. 41
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Տնօրենի ժ/պ՝ Տիգրան Վահրամյան
ստորագրություն, L.S.	ստորագրություն, L.S.